ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

1 Այն ցեղերի և տոհմերի համար, որոնք ընտելացրին կենդանիներին, բայց դեռ ծանոթ չէին հողագործությանը, հիմնական զբաղմունք դարձավ ***քոչվոր անասնապահությունը***, իսկ այն ցեղերի ու տոհմերի համար, որոնք կենդանիներին ընտելացնելիս արդեն ծանոթ էին հողագործությանը, հիմնական զբաղմունք դարձավ ***նստակյաց երկրագործությունը***:

2 Մետաղյա առաջին գործիքները պատրաստվել են պղնձից: Սակայն պղինձը փափուկ մետաղ է, և պղնձե գործիքները շուտ էին բթանում: Պղնձե գործիքների հետ մարդիկ շարունակում էին օգտագործել նա և քարե գործիքները: Ահա ինչու ***Ք.ծ.ա. V–IV հազարամյակները անվանում են պղնձի–քարի դար***:

3 Բրոնզից ավելի թեթև և շատ ավելի ամուր մետաղ է երկաթը: Մարդիկ երկաթը մշակել սովորեցին ավելի ուշ՝ Ք.ծ.ա. II հազարամյակի վերջին: Երկաթյա գործիքները դուրս մղեցին բրոնզին և տարածվեցին ողջ աշխարհում: ***Երկաթի դարը սկսվել է Ք.ծ.ա. I հազարամյակից:***

4 Երկրագործությամբ զբաղվող տոհմերի ապրուստը բարելավվում էր, բնակչությունը ավելանում էր: Երբ տոհմի անդամների թիվը շատ էր մեծանում, տոհմը կիսվում էր: Մի կեսն առանձնանում էր և բնակվում մոտակա վայրում՝ կազմելով նոր տոհմ:

5

Քաղաքը բոլորովին նոր երևույթ էր հասարակության կյանքում: Քաղաքը և հարակից գյուղական տարածքները մեկ միասնություն էին: Քաղաքում էր գտնվում ցեղային միության սրբավայրը, այդտեղ էին պահվում որպես հարկ հավաքված բարիքները և մթերքի պաշարները: Քաղաքում էր բնակվում հասարակության վերնախավը՝ ցեղապետերը, տոհմավագները, քրմերը, զինվորները, նաև արհեստավորներն ու առևտրականները՝ մի քանի հազար մարդ: Գնալով բարդանում էին հարաբերությունները տարբեր խավերի միջև: Անհրաժեշտ էր լինում կարգավորել քաղաքներում կուտակված մեծաթիվ բնակչության միջև մշտապես ծագող վեճերն ու ընդհարումները, սահմանել հարաբերությունների, վարքագծի և ապրելակերպի նոր կանոններ և պարտադրել մարդկանց դրանք պահպանել:

6

Պետությունը հատուկ կազմակերպություն է, որը ստեղծվում է՝ ապահովելու օրենքների գործունեությունը, պահպանելու կարգ ու կանոնը, կազմակերպելու և ղեկավարելու հանրային աշխատանքները, պաշտպանելու բնակչությանը արտաքին թշնամիներից:



«Բարեբեր կիսալուսինը» կամ ***«ոսկե եռանկյունը»*** ներառում է Իրանական սարահարթի հյուսիս-արևմտյան, Հայկական լեռնաշխարհի հարավային, Փոքր Ասիայի հարավ-արևելյան շրջանները և ներկայիս Սիրիայի տարածքը: Այստեղ հիմա էլ դեռ հանդիպում են կուլտուրական հացազգի բույսերի վայրի տեսակներից շատերը (ցորենի տեսակներ, գարի, աշորա, հաճար, վարսակ, կորեկ և այլն): Ընտանի կենդանիներից գրեթե բոլորի (այծ, ոչխար, խոզ, կով, ավանակ, ձի և այլն) վայրի տեսակները ևս գոյություն են ունեցել միայն այս նախալեռնային-տափաստանային տարածքում: